



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» մարտի 2007թ.

N 17-Կ

ք.Ստեփանակերտ

ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սերմերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Սահմանել մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտի ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ արտադրողի կողմից հայտի ներկայացման ընթացակարգը:

2. Հայտը կարող է ներկայացնել ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007թ. փետրվարի 27-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավատարմագրման կարգը և սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների մասին հայտի ձևը հաստատելու մասին թիվ 88 որոշման հաստատված ձևի:

3. Մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտը ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն անմիջական (անձամբ կամ ներկայացուցչի միջոցով) կամ փոստային առաքմամբ:

4. Մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտը ներկայացվում է տվյալ մշակաբույսի ցանքսից առնվազն մեկ ամիս առաջ:

5. Ներկայացված հայտը համարակալվում է և գրանցվում գրանցամատյանում, որը վարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը:

6. Գրանցված և համարակալված հայտի տեղեկություններն օգտագործվում են սերմերի հավաստագրման գործընթացում: